Կարգապահական գործ թիվ ԿԳ-26007

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԽԱՆՈՒՄ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Սուրեն Ղազարյանի և դիմողի ներկայացուցիչ Ծովինար Ղազարյանի **(այսուհետ նաև՝ Դիմող)**,

քննության առնելով փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանին (արտոնագիր՝ թիվ 278) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Սուրեն Ղազարյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ 02.05.2025թ. փաստաբան Խանում Մկրտչյանի հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն՝ վերջինս պարտավորվել է ներկայացնել Դիմողի և նրա եղբոր շահերը ժառանգության ընդունման հարցի շրջանակներում: Բացի նշվածից՝ նաև թիվ ԵԴ2/30255/02/23 քաղաքացիական գործով Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել հայցվոր Անդրանիկ Ղազարյանի շահերը:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանին հանձնվել են փաստաթղթեր և «viber» հավելվածի միջոցով ուղարկվել է լիազորագիրը և պայմանագիրը:

Դիմողը նշել է, որ պայմանագիրը կնքվել է իր հետ և վճարումները կատարվել են առձեռն:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը որևէ առարկայական գործողություն չի կատարել հանձնարարության կատարման ուղղությամբ: Դիմողը «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից տեղեկացել է, որ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Թիվ ԿԳ-26007-2-Ա
10.06.2026թ.

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Խանում Մկրտչյանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 18.03.2026 Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 30.03.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 02.05.2025թ. կնքել է Փաստաբանի հետ պայմանագիրը, որով նախատեսված է եղել 300.000 ՀՀ դրամ վճարել պայմանագրի կնքման պահին, իսկ 200.000 ՀՀ դրամ գումարը մինչև 30.05.2025թ.:

Դիմողը հայտնել է, որ գումարն ամբողջությամբ է վճարել, սակայն Փաստաբանը վճարման անդորրագիր չի տվել:

Միաժամանակ, Դիմողը նշել է, որ իր ժառանգության հարցի լուծման ուղղությամբ մինչ օրս իր անունից ներկայացված հայցադիմում առկա չէ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Խանում Մկրտչյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Սուրեն Ղազարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 04.02.2026թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Անդրանիկ Ղազարյանի հետ 02.05.2025թ. կնքել է վճարովի փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր և վերջինիս տրամադրել պայմանագրի օրինակը:

Փաստաբանը նշել է, որ պարտավորությունների համաձայն՝ Անդրանիկ Ղազարյանի անունից թիվ ԵԴ2/30255/02/23 քաղաքացիական գործով ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Փաստաբանը պարզաբանել է Դիմողին, որ անհրաժեշտ է դիմում ներկայացնել նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ: Այսպիսով Դիմողի կինը ներկայացրել է դիմում նոտարական գրասենյակ, ինչի հիման վրա Փաստաբանը դատարանին դիմում է ներկայացրել Դիմողի կնոջ՝ Ծովինար Ղազարյանին իրավահաջորդ ներգրավելու համար:

Փաստաբանը հայտնել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը գտել է, որ ԵԴ2/30255/02/23 քաղաքացիական գործով վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդություն և կարճել է վարույթը:

Ըստ Փաստաբանի՝ նրա կողմից իրականացվել են պայմանագրային պարտավորությունները և խնդրել է մերժել բողոքն անհիմն լինելու հիմքով:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 18.03.2026 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն այդպիսիք չեն ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 19.02.2026 թվականի թիվ 102-Ա/ԿԳ-26007 որոշմամբ փաստաբան Խանում Մկրտչյանի նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 3.5.5 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

23.02.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 23.04.2026թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 23.04.2026թ.:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 10.06.2026թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Խանում Մկրտչյանը ստանձնել է Դիմող Սուրեն Ղազարյանի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է 02.05.2025թ. կողմերի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով (**այսուհետ՝ Պայմանագիր**), ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Կատարողը Պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ «կազմել հայցադիմում ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ քաղ գործով և մասնակցել գործի քննությանը ընդհանուր իրավասության դատարանում»: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրով:*

3. Փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումը Դիմողի կողմից կատարվել է կանխիկ եղանակով՝ 02.05.2025թ. Պայմանագրի կնքման ժամանակ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի բացատրությամբ և չի հերքվում Փաստաբանի կողմից:*

4. Կարգապահական նիստի ժամանակ Դիմողը նշել է, որ փաստաբանական ծառայությունների դիմաց 2-րդ վճարումը կատարել է 02.06.2025 թվականին: *Սույն փաստը հաստատվում է կարգապահական նիստի ձայնագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Խանում Մկրտչյանը փաստաբան է հանդիսանում 30.08.1996 թվականից և 2018-2026 թվականների ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է հինգ կարգապահական տույժ:

Տեղեկանքի համաձայն՝ դրանց շրջանակներում նշանակված երկու լրացուցիչ կարգապահական տույժեր ներկայումս մարված չեն:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Խանում Մկրտչյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման համար: Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ Խանում Մկրտչյանի նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին **բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ** իր մասնագիտական կարողությունների սահմաններում, **ինչը ենթադրում է** իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններից հետևում է, որ փաստաբանի մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարման գնահատման համար էական

նշանակություն ունի փաստաբանի կողմից ստանձնած հանձնարարության բովանդակությունը և այն հանգամանքը, թե արդյոք փաստաբանը կատարել է այդ հանձնարարությունից բխող անհրաժեշտ գործողությունները:

Սույն գործով հաստատված է, որ 02.05.2025 թվականին կնքված Պայմանագրի 2.1 կետով Փաստաբանը ստանձնել է կազմել հայցադիմում՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու վերաբերյալ, և մասնակցել գործի քննությանը ընդհանուր իրավասության դատարանում: Հետևաբար, Պայմանագրով նախատեսված իրավաբանական օգնության բովանդակությունը չի սահմանափակվել իրավական խորհրդատվության տրամադրմամբ, այլ ներառել է համապատասխան հայցադիմում կազմելու և գործի քննությանը ընդհանուր իրավասության դատարանում մասնակցելու պարտականությունները: Մինչդեռ գործի նյութերով չի հաստատվում, որ Փաստաբանը կատարել է Պայմանագրի 2.1 կետով նախատեսված պարտականությունը:

Փաստաբանը, անդրադառնալով իր կողմից կատարված գործողություններին, հայտնել է նաև, որ Դիմողին պարզաբանել է նոտարական գրասենյակ դիմելու անհրաժեշտությունը՝ ըստ կտակի ժառանգությունն ընդունելու վերաբերյալ:

Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողին նոտարական գրասենյակ դիմելու անհրաժեշտության վերաբերյալ իրավական խորհրդատվություն տրամադրելը, ինքնին, չի կարող դիտարկվել որպես Պայմանագրի 2.1 կետով ստանձնած հանձնարարության ամբողջական կատարում, քանի որ կողմերի միջև կնքված Պայմանագրով Փաստաբանը ստանձնել է նաև այլ պարտավորություններ: Ընդ որում, եթե նոտարական գրասենյակ դիմելը Փաստաբանի մասնագիտական գնահատմամբ հանդիսացել է Պայմանագրով նախատեսված հայցադիմումը կազմելու համար անհրաժեշտ նախնական քայլ, ապա այդ հանգամանքը կարող էր պայմանավորել հանձնարարության կատարման հաջորդականությունը, սակայն ինքնին չէր վերացնում Պայմանագրով ստանձնած՝ հանձնարարությունը:

Գործի նյութերում առկա չեն տվյալներ այն մասին, որ կողմերի համաձայնությամբ հետագայում փոփոխվել է Պայմանագրով նախատեսված հանձնարարության բովանդակությունը:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից վկայակոչված՝ վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելուն և Ծովինար Ղազարյանին իրավահաջորդ ներգրավելու վերաբերյալ դիմում ներկայացնելուն, ապա նշված հանգամանքների կապակցությամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, հետևաբար դրանք սույն վարույթի քննության առարկա չեն:

Այսպիսով, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը, ստանձնելով հայցադիմում կազմելու և գործի քննությանը ընդհանուր իրավասության դատարանում մասնակցելու պարտականությունները, չի կատարել ստանձնած հանձնարարության հիմնական բաղադրիչը՝ համապատասխան հայցադիմում կազմելու գործողությունը:

Նման պայմաններում Փաստաբանի կողմից միայն նոտարական գրասենյակ դիմելու վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը բավարար չէ Պայմանագրով ստանձնած հանձնարարությունը պատշաճ կատարված համարելու համար:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագիծը չի համապատասխանում Կանոնագրքի 3.5.5 ենթակետով նախատեսված՝ մասնագիտական պարտականությունները ողջամտորեն, բարեխղճորեն և ժամանակին կատարելու

պահանջին, ինչի արդյունքում հաստատված է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջների խախտումը:

7.2 Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման մասով.

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության համար կատարվող վճարումները իրականացվում են «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:*

«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանական ծառայությունների, ինչպես նաև բոլոր խորհրդատվական (հաշվապահական, աուդիտորական, իրավաբանական, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ խորհրդատվական) ծառայությունների մատուցման վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:*

Նշված կարգավորումներից հետևում է նաև, որ փաստաբանի կողմից ծառայությունների մատուցման վճարների ընդունումը պետք է իրականացվի անկանխիկ եղանակով:

Միաժամանակ, Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց երկու տարի հետո: Նույն նորմի համաձայն՝ նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ այդ ժամկետների խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Նշված իրավական նորմով նախատեսված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետը: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում փաստաբանի վստահորդը կամ այլ իրավասու անձ կարող է Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման հիմքով ներկայացնել հաղորդում՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

Նշված ժամկետն անցնելը, այսինքն՝ այդ ժամանակահատվածում կարգապահական վարույթ հարուցելու հաղորդում (դիմում) չներկայացնելը, շահագրգիռ անձի համար առաջացնում է անբարենպաստ իրավական հետևանք այն առումով, որ նույնիսկ կարգապահական պատասխանատվության հիմքի առկայության և փաստաբանին վերագրվող արարքի հաստատման պարագայում Օրենքի իմպերատիվ պահանջից ելնելով փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ այդ ժամկետի խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Սույն գործով Դիմողը Փաստաբանին, ի թիվս այլնի, վերագրում է փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումները կանխիկ եղանակով ընդունելու վարքագիծ:

Գործի նյութերով հաստատված է, որ փաստաբանական ծառայությունների դիմաց առաջին վճարումը Դիմողի կողմից կանխիկ եղանակով կատարվել է 02.05.2025 թվականին՝ Պայմանագրի կնքման ժամանակ: Միաժամանակ, կարգապահական նիստի ընթացքում Դիմողը հայտնել է, որ երկրորդ վճարումը կատարել է 02.06.2025 թվականին:

Վերոգրյալից հետևում է, որ Դիմողին Փաստաբանի կողմից վճարումները կանխիկ եղանակով ընդունելու հանգամանքը հայտնի է եղել հենց համապատասխան վճարումները կատարելու պահից: Հետևաբար, կարգապահական պատասխանատվության համապատասխան հիմքի հայտնաբերման պահեր են համապատասխանաբար 02.05.2025

և 02.06.2025 թվականները:

Մինչդեռ Դիմողի դիմումը Պալատ մուտք է եղել **19.01.2026 թվականին**, այսինքն՝ ինչպես 02.05.2025 թվականին կատարված առաջին, այնպես էլ 02.06.2025 թվականին կատարված երկրորդ կանխիկ վճարման և դրանց եղանակի մասին Դիմողի իրազեկվելու պահից անցել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Այսպիսով, Դիմողի կողմից Փաստաբանի՝ փաստաբանական ծառայությունների դիմաց վճարումները կանխիկ եղանակով ընդունելու վերաբերյալ հաղորդումը Պալատ է ներկայացվել կարգապահական պատասխանատվության համապատասխան հիմքերը հայտնաբերելուց ավելի քան վեց ամիս անց: Հետևաբար, Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետը տվյալ մասով անցած լինելու պայմաններում Փաստաբանի նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության

միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Հանձնաժողովը, անդրադառնալով Փաստաբանի նկատմամբ կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակին, նախ հաշվի է առնում սույն գործով հաստատված խախտման բնույթը: Մասնավորապես, Փաստաբանը, ստանձնելով հայցադիմում կազմելու և գործի քննությանը ընդհանուր իրավասության դատարանում մասնակցելու պարտականություն, այն չի կատարել, ինչի արդյունքում թույլ է տվել Կանոնագրքի 3.5.5 ենթակետով սահմանված՝ մասնագիտական պարտականությունները ողջամտորեն, բարեխղճորեն և ժամանակին կատարելու պահանջի խախտում:

Միաժամանակ, կարգապահական տույժի անհատականացման համար Հանձնաժողովն էական է համարում Փաստաբանի նկատմամբ առկա կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալները:

Գործում առկա տեղեկանքի համաձայն՝ Փաստաբանի նկատմամբ 31.01.2024 թվականի թիվ ԿԳ-230382-2-Ա որոշմամբ կիրառվել է հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ լրացուցիչ վերապատրաստում: Նշված որոշմամբ հաստատվել է, ի թիվս այլնի, նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջի խախտում: Տեղեկանքի համաձայն՝ հիմնական տույժը մարված է, իսկ լրացուցիչ տույժը՝ մարված չէ:

Բացի այդ, Փաստաբանի նկատմամբ 26.03.2025 թվականի թիվ ԿԳ-24176-2-Ա որոշմամբ կիրառվել է հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով՝ 4 ակադեմիական ժամ ժամաքանակով: Նշված գործով ևս, ի թիվս այլնի, հաստատվել է Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջի խախտում: Տեղեկանքի համաձայն՝ այս դեպքում ևս հիմնական տույժը մարված է, իսկ լրացուցիչ տույժը՝ մարված չէ:

Օրենքի 39.10-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ որպես լրացուցիչ տույժ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու դեպքում փաստաբանը համարվում է կարգապահական տույժի չենթարկված՝ վերապատրաստումն անցնելու պահից երեք ամիս հետո, բայց ոչ շուտ, քան հիմնական տույժի համար նույն մասով նախատեսված համապատասխան ժամկետի լրանալը:

Վկայակոչված կարգավորումից հետևում է, որ հիմնական կարգապահական տույժի համար Օրենքով սահմանված ժամկետի լրանալն ինքնին չի հանգեցնում դրա հետ նշանակված լրացուցիչ կարգապահական տույժի մարմանը: Լրացուցիչ վերապատրաստման ձևով նշանակված տույժի մարումը պայմանավորված է նաև դրա փաստացի կատարմամբ և վերապատրաստումն անցնելուց հետո օրենքով սահմանված ժամկետի լրանալով: Հետևաբար, այն պայմաններում, երբ Փաստաբանի նկատմամբ

նշանակված հիմնական կարգապահական տույժերը մարված են, սակայն երկու լրացուցիչ կարգապահական տույժերը՝ ոչ, Հանձնաժողովը վերջիններս գնահատում է որպես Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով առկա կարգապահական տույժեր:

Հանձնաժողովը կարևոր է համարում նաև այն, որ լրացուցիչ վերապատրաստման ձևով կարգապահական տույժն իր բնույթով ունի ոչ միայն պատասխանատվության, այլև ուղղիչ և կանխարգելիչ նշանակություն: Դրա նպատակը փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում արձանագրված թերությունների շտկմանը նպաստելն ու հետագայում համանման խախտումների հավանականությունը նվազեցնելն է: Մինչդեռ տվյալ դեպքում Փաստաբանը չի կատարել իր նկատմամբ նշանակված երկու լրացուցիչ կարգապահական տույժերը, հետևաբար դրանցով հետապնդվող ուղղիչ և կանխարգելիչ ազդեցությունը չի կարող համարվել իրացված:

Այս համատեքստում Հանձնաժողովը կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ երկու նախորդ կարգապահական վարույթներով, որոնց արդյունքում նշանակվել են ներկայումս չմարված լրացուցիչ տույժերը, ի թիվս այլնի, հաստատվել է Կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջի խախտում, իսկ սույն գործով կրկին հաստատվել է նույն կանոնով սահմանված մասնագիտական պարտականության խախտում: Ընդ որում, Հանձնաժողովը նախորդ գործերով նշանակված և արդեն մարված հիմնական կարգապահական տույժերը չի դիտարկում որպես Փաստաբանի նկատմամբ ներկայումս առկա տույժեր և դրանց ինքնուրույն իրավական հետևանք չի հաղորդում: Տույժի տեսակի ընտրության համար նշանակություն է տրվում այն հանգամանքին, որ Փաստաբանի նկատմամբ առկա են երկու չմարված լրացուցիչ կարգապահական տույժեր, որոնք Փաստաբանը չի կատարել, իսկ սույն վարույթով կրկին հաստատվել է այնպիսի մասնագիտական պարտականության խախտում, որի խախտումը հաստատվել էր նաև նշված նախորդ կարգապահական վարույթներում:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ վերոնշյալ հանգամանքների համակցությունը վկայում է, որ տվյալ դեպքում առավել մեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի կիրառումը բավարար չի լինի Փաստաբանի վարքագծի նկատմամբ անհրաժեշտ կարգապահական ներգործությունն ապահովելու և հետագայում համանման խախտումների կանխարգելման համար:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ սույն գործով հաստատված խախտումը վերաբերում է վստահորդի նկատմամբ ստանձնած մասնագիտական հանձնարարության պատշաճ կատարմանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Փաստաբանի նկատմամբ նախկինում նշանակված լրացուցիչ վերապատրաստումները չեն կատարվել և դրանց կանխարգելիչ ու ուղղիչ ազդեցությունը չի կարող համարվել իրացված, *Հանձնաժողովը նպատակահարմար է համարում Փաստաբանի նկատմամբ կրկին կիրառել նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ձևով կարգապահական տույժ:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով կատարված խախտման բնույթը, Փաստաբանի նկատմամբ առկա երկու չմարված լրացուցիչ կարգապահական տույժերը, դրանց չկատարված լինելը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն գործով ևս հաստատվել է Կանոնագրքի 3.5.5 ենթակետով սահմանված մասնագիտական պարտականության խախտում, գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ «խիստ նկատողություն» կարգապահական տույժի և որպես լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում «Դեոնթոլոգիա» թեմայով լրացուցիչ

վերապատրաստման կիրառումը համաչափ է կատարված խախտմանը և անհրաժեշտ՝ կարգապահական պատասխանատվության ուղղիչ ու կանխարգելիչ նպատակների ապահովման համար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և 3-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 278) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Խանում Սերյոժայի Մկրտչյանի (արտոնագիր՝ թիվ 278) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-26007 կարգապահական վարույթը Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների խախտման հատկանիշների մասով կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26007-2-Ա
10 հունիսի 2026թ.
ք.Երևան